Տնտեսական Զարգացման և Հետազոտությունների Կենտրոն

Հայաստանի Հանրապետության ղեկավար մարմինները


ՀՀ Նախագահի
Օրենսդիր իշխանություն
Գործադիր իշխանություն
Դատական իշխանություն

ՀՀ Նախագահը

Հանրապետության Նախագահը պետության գլուխն է:

Նախագահը հետևում է Սահմանադրության պահպանմանը, ապահովում է օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բնականոն գործունեությունը:
Հանրապետության Նախագահը ՀՀ անկախության, տարածքային ամբողջականության և անվտանգության երաշխավորն է:

Նախագահը զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարն է:

Հանրապետության Նախագահը համակարգում է պետական մարմինների գործունեությունը պաշտպանության բնագավառում, նշանակում և ազատում է զինված ուժերի և այլ զորքերի բարձրագույն հրամանատարական կազմը:

Հանրապետության Նախագահն անձեռնմխելի է:

Հանրապետության Նախագահն իր լիազորությունների ժամկետում և դրանից հետո չի կարող հետապնդվել և պատասխանատվության ենթարկվել իր կարգավիճակից բխող գործողությունների համար: Իր կարգավիճակի հետ չկապված գործողությունների համար Հայաստանի Նախագահը կարող է պատասխանատվության ենթարկվել իր լիազորությունների ավարտից հետո: Նախագահը կարող է պաշտոնանկ արվել պետական դավաճանության կամ այլ ծանր հանցագործության համար:

ՀՀ Նախագահը (2)

Հանրապետության նախագահն ընտրվում է ՀՀ քաղաքացիների կողմից 5 տարի ժամետով, ընդ որում, նույն անձը չի կարող **երկու** անգամից ավել **անընդմեջ** ընտրվել Հանրապետության նախագահի պաշտոնում:

ՀՀ նախագահը՝

- ստորագրում և հրապարակում է ԱԺ ընդունած օրենքները ստանալուց հետո քսանմեկօրյա ժամկետում,
- վարչապետ է նշանակում ԱԺ պատգամավորների մեծամասնության վստահությունը վայելող անձին (եթե հնարավոր չէ՝ առավել թվով պատգամավորների վստահությունը վայելող անձին),
- Վարչապետի առաջարկությամբ նշանակում և ազատում է Կառավարության անդամներին,
- կազմավորում է ազգային անվտանգության խորհուրդ և նախագահում այն, կարող է կազմավորել խորհրդակցական այլ մարմիններ,

ՀՀ Նախագահը (3)

- ԱԺ է առաջարկում գլխավոր դատախազի, կենտրոնական բանկի նախագահի և վերահսկիչ պալատի նախագահի թեկնածությունները,
- ներկայացնում է Հայաստանի Հանրապետությունը միջազգային հարաբերություններում, իրականացնում է արտաքին քաղաքականության ընդհանուր ղեկավարումը, կնքում է միջազգային պայմանագրեր,
- ԱԺ-ի վավերացմանն է ներկայացնում միջազգային պայմանագրեր և ստորագրում դրանց վավերագրերը, հաստատում, կասեցնում կամ չեղյալ է հայտարարում վավերացում չպահանջող միջազգային պայմանագրերը,
- նշանակում և հետ է կանչում օտարերկրյա պետություններում և միջազգային կազմակերպություններին առընթեր ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչների:

Ազգային ժողով

Հայաստանի Հանրապետությունում օրենսդիր իշխանությունն իրականացնում է Ազգային Ժողովը:
ԱԺ-ն բաղկացած է 131 պատգամավորից և ընտրվում է հինգ տարի ժամկետով:

Ազգային ժողովի ընտրություններն անցկացվում են համամասնական և մեծամասնական ընտրակարգով: 75 պատգամավոր ընտրվում է համամասնական ընտրակարգով, իսկ 56 պատգամավոր՝ մեծամասնական ընտրակարգով:

Պատգամավորն իր պատգամավորության լիազորությունների ժամկետում և դրանից հետո չի կարող հետապնդվել և պատասխանատվության ենթարկվել պատգամավորի՝ իր կարգավիճակից բխող գործողությունների համար:

Ազգային ժողովի մարմինները

ԱԺ նախագահը → ընտրվում է ԱԺ պատգամավորների կողմից գաղտնի քվեարկությամբ

ԱԺ նախագահի տեղակալները → ընտրվում են ԱԺ պատգամավորների կողմից գաղտնի քվեարկությամբ

ԱԺ պատգամավորները → ընտրվում են համամասնական և մեծամասնական ընտրակարգով

մշտական և ժամանակավոր հանձնաժողովները

Դատական իշխանություն

Սահմանադրությամբ և օրենքով սահմանված կարգով ձևավորվում և գործում է արդարադատության խորհուրդը:

Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են ընդհանուր իրավասության առաջին ատյանի, վերաքննիչ դատարանները և վճռաբեկ դատարանը՝ ՀՀ բարձրագույն դատական ատյանը (բացի սահմանադրական արդարադատության հարցերից), իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև մանագիտացված դատարանները:

Առաջին ատյանի, վերաքննիչ, վճռաբեկ և մասնագիտացված դատարանների նախագահին նշանակում է ՀՀ նախագահը արդարադատության խորհրդի առաջարկությամբ:

Դատական իշխանություն (2)

Սահմանադրական արդարադատությունն իրականացնում է Սահմանադրական դատարանը:

Սահմանադրական դատարանի նախագահին նշանակում է ազգային ժողովը սահմանադրական դատարանի կազմից:
Սահմանադրական դատարանը բաղկացած է 9 անդամից, որից 5-ը նշանակվում են ազգային ժողովի և 4-ը՝ ՀՀ նախագահի կողմից:

Դատական իշխանություն (2)

ՀՀ դատախազությունը միասնական համակարգ է, որը ղեկավարում է գլխավոր դատախազը:

Գլխավոր դատախազին ՀՀ նախագահի առաջարկությամբ նշանակում է ազգային ժողովը:

Դատախազությունն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով՝

- հարուցում է քրեական հետապնդում
- հսկողություն է իրականացնում հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ
- դատարանում պաշտպանում է մեղադրանքը
- պետական շահերի պաշտպանության հայց է հարուցում դատարան
- բողոքարկում է դատարանների վճիռները, դատավճիռները և որոշումները
- հսկողություն է իրականացնում պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ: